



«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2022**

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝

**Ժամանակակից տեղեկատվական
տեխնոլոգիաների ազդեցությունը և
դերը երեխաների հոգեբանական
զարգացման վրա**

ԱՌԱՐԿԱ

Մասնագիտական զարգացում

ՀԵՂԻՆԱԿ

Մարինե Մանուկյան

ՄԱՐԶ

Արմավիր

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

**ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Վաղարշապատի Խ.Աբովյանի անվան N 4
հիմնական դպրոց ՊՈԱԿ**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ3

ԳԼՈՒԽ1. Ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը ուսուցման գործընթացում.....5

ԳԼՈՒԽ2. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ..... 17

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....21

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մարդկության զարգացման պատմության մեջ երբևէ չեն եղել փոփոխությունների ավելի հզոր ուժ և խթան, քան տեխնոլոգիաները: ՏՀՏ-ը հնարավորություն են ընձեռում ընկղմվել այնպիսի մի հրապուրիչ ուսուցողական միջավայր, որտեղ հասանելի են գրեթե անսահմանափակ քանակությամբ զանազան նյութեր ու տեղեկություններ, և ամենակարևորը՝ գիտելիքի ձեռք բերման նպատակով ընդլայնել ուսումնական ծրագրերի ու դասագրքերի շրջանակները: Ի վերջո ՏՀՏ-ը թույլ են տալիս ուսուցչին ու աշակերտին հաղորդակցվել միևնույն միջավայրում և նույն «լեզվով»:

Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներն ավելի խորն է ներթափանցում մարդու կյանք, իսկ տեղեկատվական ունակություններն ավելի ու ավելի են բնութագրում կրթվածության մակարդակը: Այդ պատճառով տեղեկատվական մշակույթն անհրաժեշտ է զարգացնել տարրական դպրոցից, քանի որ տարրական դպրոցը կրթության հիմնաքարն է: Աշակերտի հետագա առաջադիմությունը կախված է այն բանից, թե ինչպիսին կլինի հիմնաքարը, նաև պետք է երեխան պատրաստ լինի ապրել և աշխատել ներկա հազարամյակի հետարտադրական հասարակությունում: Նա պետք է ինքնուրույն, ակտիվ գործի, ընդունի որոշումներ, հարմարվի կյանքի փոփոխվող պայմաններին:

Յուրաքանչյուր կրթական համակարգ և յուրաքանչյուր անհատ մանկավարժ՝ պետք է ունենա և գտնի յուրաքանչյուր առանձին դեպքի համար ամենահարմար լուծումը: Մեր տեսակետն այն է, որ չնայած տեղեկատվական տեխնոլոգիայի տրամաբանությունը շատ բան կարող է անել կրթության հին ձևերը բարելավելու համար, այդուհանդերձ այն երբեք չի կարողանա փոխարինել «մարդկային գործոնին»:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է կրթության բնագավառում ՏՏ-ների կիրառման անհարժեշտությամբ և արդյունավետությամբ, և տարրական դպրոցում դրանց կիրառման դժվարություններով: Այսօր կրթության բնագավառում նորագույն միտումների քննարկումն անհնար է թվում առանց նորագույն տեխնոլոգիաների առկայության: Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը նպաստում է կրթության որակի բարձրացմանը: Այս իմաստով դպրոցներում

տեխնոլոգիայի կիրառվող բազմազան ձևերը հեշտացնում են մեր գործունեությունը: Այսօր համակրգիչներ օգտագործելու ունակությունը կարող է նույնքան կարևոր լինել, որքան կարդալու, գրելու, հեռախոսից օգտվելու ունակությունը: Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը որակապես փոխում է ուսուցչի դերը. ուսուցիչը դառնում է սովորողի կրթական գործը կազմակերպող, նրան աջակցող և գնահատող գործընկեր: Տարրական դասարաններում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները օգտագործում են ուսումնական նյութն ավելի գրավիչ և հասկանալի ներկայացնելու համար:

Մեր հետազոտության նպատակն է՝ մշակել մեթոդական ցուցումներ, ՏՏ-ների կիրառման ուղղությամբ:

Մեր նպատակին հասնելու համար պետք է հասնեինք հետևյալ խնդիրների լուծմանը, որոնք դրել էինք մեր առջև.

Հետազոտության խնդիրները

- Ուսումնասիրել ծրագիրն ու դասագրքերը, ՏՏ-ների կիրառման տեսանկյունից:
- Պարզել, թե ՏՏ-ների կիրառման ինչ հնարավորություններ կան, և հիմնավորել այդ դասերի արդյունավետությունը:
- Հետազոտության մեթոդները
- Օգտագործվել են մանկավարժական հետազոտության տեսական և փորձարարական հետևյալ մեթոդները.

Հետազոտության մեթոդական համակարգը ներառում է՝

Սովորողների տեղեկատվական տեխնոլոգիաներ և դրա հետ շաղկապված լեզվահաղորդակցական կարողությունների զարգացման խնդիրը ընդհանուր հարցադրումների և նպատակադրումների մակարդակից փոխադրվում է կոնկրետ առարկայական իրականացման դաշտ: Հանգամանորեն պարզաբանվում են ՏՀՏ տարրերի ուսուցման մեթոդական հարցերը, առաջարկվում մեթոդական հնարներ, ներկայացվում խնդիրների, վարժությունների և առաջադրանքների նոր տեսակներ, որոնց նպատակային գործածման շնորհիվ ոչ միայն բացահայտվում են ուսումնական նյութի ճանաչողական և կիրառական տեսանկյունները, այլև ուսուցման գործընթացը սովորողների համար դառնում է մատչելի, հետաքրքիր և գրավիչ:

Ժամանակի ընթացքում տեխնոլոգիաների զարգացումը ստեղծում է հաղորդակցման նոր ձևեր: Այս տեխնոլոգիական առաջխաղացումները հեղաշրջման հիմք են հանդիսացել

հաղորդակցման ողջ գործընթացում: Տեխնոլոգիաների զարգացումը հնարավորություն է տալիս վերացնել այն արգասիքները, որոնց հանդիպում են սովորողներն ու ուսուցիչները ամբողջ աշխարհում: Հզոր ծրագրերն ու համացանցը փոխում են գիտելիքներ ձեռք բերելու մեր ուղիներն ու հնարավորությունները: Հաղորդակցման գործունեության հետազոտությունները ներկայումս պատկանում են մարդկային ամենաարդիական ու գլոբալ խնդիրների թվին: Հաղորդակցման մեջ մենք ոչ թե ուղղակի հաղորդում ենք տեղեկություն, այլ փոխանակում ենք վերաբերմունք, գիտելիքներ, հույզեր և այլն:

Ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը ուսուցման գործընթացում

Տարրական օղակը կրթության այն հիմնաքարն է, որի որակից է կախված երեխայի հետագա ուսուցումը: Սա տարրական դպրոցի ուսուցչի համար հատուկ պատասխանատվություն է սահմանում: Նրա խնդիրն է ոչ միայն կարդալ ու գրել սովորեցնել, այլև երեխայի հոգևոր հիմքը հաստատել, բացահայտել նրա լավագույն որակները, ուսումնական գործունեության ուղիները ցույց տալ: Հենց վերջինն էլ հատկապես կարևոր է այժմյան արագ փոփոխվող, տեղեկատվությամբ հեղեղված աշխարհում: Պետք է սովորեցնել երեխային աշխատել տեղեկատվության հետ, սովորեցնել սովորել:

Ակադեմիկոս Ա. Պ. Սեմյոնովի հայտարարությունը, թե՛ «Ժամանակակից դպրոցի կարևորագույն խնդիրն է սովորեցնել մարդուն ապրել տեղեկատվական աշխարհում», պետք է որոշիչ լինի յուրաքանչյուր ուսուցչի աշխատանքում: Այդ նպատակների իրականացման համար դասվարի աշխատանքային գործունեության մեջ ՏՀՏ միջոցների կիրառումը անհրաժեշտություն է դառնում: Կրտսեր դպրոցականների ուսումնական գործընթացում ՏՀՏ-ների օգտագործման նպատակահարմարության մասին են խոսում նրանց տարիքային այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսիք են տեսողական - պատկերավոր մտածողության զարգացումը՝ բանավոր և տրամաբանական մտածողության համեմատ, ինչպես նաև անալիզատորների անհավասար և ոչ բավարար զարգացումը, որոնց շնորհիվ են երեխաները ընկալում տեղեկությունը դրա հետագա մշակման համար: Եթե տեղեկությունը չի ընկալվել, ապա այն չի կարող հասկանալի, յուրացված լինել, դառնալ անհատի սեփականությունը:

Այսօր ՏՀՏ-ների լայնածավալ կիրառումը իր տեղն է գտնում առաջին հերթին դասագործընթացին: Տարրական դպրոցի տեղեկատվությունը կարևոր դերակատարություն ունի կրթության ժամանակակից որակի և 21-րդ դարի երեխայի տեղեկատվական մշակույթի ձևավորման համար: Այստեղից էլ բխում են ՏՀՏ-ների օգտագործման նպատակները.

- բարձրացնել սովորելու մոտիվացիան /շարժառիթը/,
- մեծացնել ուսումնական գործընթացի արդյունավետությունը,
- նպաստել սովորողների ճանաչողական կարողությունների խթանմանը,
- բարելավել դասի անցկացման մեթոդները,

- ժամանակին համակարգել ուսուցման և դաստիարակության արդյունքները,
- պլանավորել և համակարգել սեփական աշխատանքը,
- օգտագործել այն որպես ինքնակրթության միջոց,
- արագ և որակյալ պատրաստվել դասին:
- Տարրական կրթության ինֆորմատիզացիան ընթանում է հետևյալ ուղղություններով.

SՀS-ների օգտագործումը որպես ուսուցման դիդակտիկ միջոցներ /դիդակտիկ միջոցների ստեղծում, տարբեր առարկաների համար պատրաստի համակարգչային ծրագրերի մշակում և օգտագործում, աշխատանքի մեջ համացանցային ռեսուրսների օգտագործում և այլն/:

- Դասի կազմակերպում SՀS-ների օգտագործմամբ /SՀS-ի օգտագործում դասի տարբեր փուլերում, գիտելիքների ամրապնդման և ստուգման համար, խմբային և անհատական աշխատանքի կազմակերպում, աշխատանք ծնողների հետ/:
- Կրտսեր դպրոցականների նախագծային աշխատանքների իրականացում SՀS-ների օգտագործմամբ:

SՀS-ների օգտագործման հնարավորությունների շառավիղը բավականին լայն է: Իհարկե, աշխատելով կրտսեր դպրոցականների հետ՝ անհրաժեշտ է հիշել պատվիրանը. «Մի՛ վնասիր»:

Ուսումնական գործընթացի կազմակերպումը տարրական դպրոցում առաջին հերթին պետք է խթանի սովորողների ճանաչողական կարողությունների ակտիվացումը, ուսումնական նյութի հաջող յուրացումը և նպաստի սովորողի հոգևոր զարգացմանը: Հետևաբար, SՀS-ն պետք է կատարի կրթական որոշակի գործառույթ, օգնի երեխային կողմնորոշվելու տեղեկատվության հեղեղի մեջ, ընկալել այն, հիշել և ոչ մի դեպքում չվնասել առողջությունը: SՀS միջոցները պետք է գործեն որպես ուսումնական գործընթացի օժանդակ տարր, այլ ոչ հիմնական:

Հաշվի առնելով կրտսեր դպրոցականի հոգեբանական առանձնահատկությունները՝ SՀS-ների հետ աշխատանքը պետք է հստակ մտածված և չափավորված լինի: Այդպիսով, SՀS-ի օգտագործումը դասին պետք է կրի նուրբ բնույթ: Ուսուցիչը դասին նախապատրաստվելիս պետք է հանգամանորեն մտածի SՀS-ի օգտագործման նպատակի, տեղի և ձևի մասին:

Կրթության քաղաքականության առաջնային խնդիրը ներկայումս կրթության ժամանակակից որակի ձեռքբերումն է, նրա համապատասխանությունը անհատի, հասարակության և պետության ներկա և ապագա կարիքներին: Միննույն ժամանակ, արդիականացման հիմնական խնդիրներից է դպրոցական կրթության նոր արդիական որակի հասնելը: Կրթության տեղեկատվականացումը պետք է օգնի լուծել դպրոցի երկու հիմնական խնդիրը՝ բոլորի համար կրթություն, կրթության որակի նոր որակ: Դասարանում տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառումը թույլ է տալիս զարգացնել աշակերտներինների շրջանում շրջակա աշխարհի տեղեկատվական հոսքը, սովորել տեղեկատվության հետ աշխատելու գործնական ուղիները, զարգացնել հմտություններ, որոնք թույլ են տալիս տեղեկություններ փոխանակել ժամանակակից տեխնիկական միջոցներով: ՏՀՏ-ի օգտագործումը դասարանում թույլ է տալիս տեղափոխել բացատրական պատկերազարդ մեթոդից դեպի գործունեության ռեժիմ, որտեղ երեխան դառնում է կրթական գործունեության ակտիվ առարկա: Մա նպաստում է աշակերտի գիտակցված ուսուցմանը:

Տեղեկատվական տեխնոլոգիաներն ավելի խորն են ներթափանցում մարդու առօրյան, իսկ տեղեկատվական ունակություններն ավելի ու ավելի են բնութագրում կրթվածության մակարդակը: Այդ պատճառով տեղեկատվական մշակույթն անհրաժեշտ է զարգացնել տարրական դպրոցից, քանի որ տարրական դպրոցը կրթության հիմնաքարն է: Աշակերտի հետագա առաջադիմությունը կախված է այն բանից, թե ինչպիսին կլինի հիմնաքարը, նաև անհրաժեշտ է, որ երեխան պատրաստ լինի ապրել և աշխատել ներկա հազարամյակի մարտահրավերներով լի հասարակությունում: Նա պետք է ինքնուրույն, ակտիվ գործի, ընդունի որոշումներ, հարմարվի կյանքի փոփոխվող պայմաններին: Կրթական նոր պահանջները բավարարելու համար խնդիր է դրվում դպրոցական լաբորատորիաները հարստացնել տեղեկատվական տեխնոլոգիաների վրա հիմնված սարքավորումներով, գրադարանը դարձնել համակարգիչներով և համացանցով հագեցած գիտելիքների շտեմարան:

Ժամանակի ընթացքում տեխնոլոգիաների զարգացումը ստեղծում է հաղորդակցման նոր ձևեր: Այս տեխնոլոգիական առաջխաղացումները հեղաշրջման հիմք են հանդիսացել հաղորդակցման ողջ գործընթացում: Տեխնոլոգիաների զարգացումը հնարավորություն է տալիս վերացնել այն արգասիքները, որոնց հանդիպում են սովորողներն ու ուսուցիչները ամբողջ աշխարհում: Հզոր ծրագրերն ու

համացանցը փոխում են գիտելիքներ ձեռք բերելու մեր ուղիներն ու հնարավորությունները: Հաղորդակցման գործունեության հետազոտությունները ներկայումս պատկանում են մարդկային ամենաարդիական ու գլոբալ խնդիրների թվին: Հաղորդակցման մեջ մենք ոչ թե ուղղակի հաղորդում ենք տեղեկություն, այլ փոխանակում ենք վերաբերմունք, գիտելիքներ, հույզեր և այլն:

Կրթության քաղաքականության առաջնային խնդիրը ներկայումս կրթության ժամանակակից որակի ձեռքբերումն է, նրա համապատասխանությունը անհատի, հասարակության և պետության ներկա և ապագա կարիքներին: Միննույն ժամանակ, արդիականացման հիմնական խնդիրներից է դպրոցական կրթության նոր արդիական որակի հասնելը: Կրթության տեղեկատվականացումը պետք է օգնի լուծել դպրոցի երկու հիմնական խնդիրը՝ բոլորի համար կրթություն, կրթության որակի նոր որակ: Դասարանում տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառումը թույլ է տալիս զարգացնել աշակերտներինների շրջանում շրջակա աշխարհի տեղեկատվական հոսքը, սովորել տեղեկատվության հետ աշխատելու գործնական ուղիները, զարգացնել հմտություններ, որոնք թույլ են տալիս տեղեկություններ փոխանակել ժամանակակից տեխնիկական միջոցներով: ՏՀՏ-ի օգտագործումը դասարանում թույլ է տալիս տեղափոխել բացատրական պատկերազարդ մեթոդից դեպի գործունեության ռեժիմ, որտեղ երեխան դառնում է կրթական գործունեության ակտիվ առարկա: Սա նպաստում է աշակերտի գիտակցված ուսուցմանը: Տեղեկատվական տեխնոլոգիաներն ավելի խորն են ներթափանցում մարդու առօրյան, իսկ տեղեկատվական ունակություններն ավելի ու ավելի են բնութագրում կրթվածության մակարդակը: Այդ պատճառով տեղեկատվական մշակույթն անհրաժեշտ է զարգացնել տարրական դպրոցից, քանի որ տարրական դպրոցը կրթության հիմնաքարն է:

Աշակերտի հետագա առաջադիմությունը կախված է այն բանից, թե ինչպիսին կլինի հիմնաքարը, նաև անհրաժեշտ է, որ երեխան պատրաստ լինի ապրել և աշխատել ներկա հազարամյակի մարտահրավերներով լի հասարակությունում: Նա պետք է ինքնուրույն, ակտիվ գործի, ընդունի որոշումներ, հարմարվի կյանքի փոփոխվող պայմաններին:

Կրթական նոր պահանջները բավարարելու համար խնդիր է դրվում դպրոցական լաբորատորիաները հարստացնել տեղեկատվական տեխնոլոգիաների վրա հիմնված սարքավորումներով, գրադարանը դարձնել համակարգիչներով և համացանցով հագեցած գիտելիքների շտեմարան: Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը որակապես կփոխի նաև ուսուցչի դերը. ուսուցիչը կդառնա ոչ այնքան գիտելիք հաղորդող, որքան սովորողի կրթական գործը կազմակերպող, նրա հետ ուսումնական նյութը ընտրող, նրան օժանդակող և գնահատող գործընկեր: Հետևաբար՝ վերապատրաստման դասընթացներ կազմակերպելիս պետք է կարևորվի ուսուցիչների համակարգչային գիտելիքների և հմտությունների զարգացումը և կարծրացած մոտեցումների և հոգեբանական բարդությունների հաղթահարումը:

Համակարգիչը պետք է ներգրավվի դպրոցի կառավարման, ուսումնական գործընթացի կազմակերպման, սովորողների առաջադիմության գնահատման, ծնողների հետ տարվող աշխատանքի և արտադասարանային գործունեության իրականացման մեջ, որպես գործիք՝ հաղորդակցման համար:

Մեփական տեղեկատվական տեխնոլոգիաները ժամանակակից աշխարհում դասվում են այնպիսի հատկությունների առաջին շարքում, ինչպիսինն են գրելն ու կարդալը: Մարդը, ով կարողանում է արդյունավետ օգտագործել տեղեկատվական տեխնոլոգիաները, ունի նոր մտածելակերպ:

Օգտագործվող տեղեկատվական միջոցներն են համակարգիչը, ձայնագրությունը, ֆիլմը և տեսաֆիլմը: Մերօրյա կրթության համար տեսողական տեղեկատվությունն ավելի կարևոր է: Ներկայացումները անկախ այն բանից, թե ինչի համար են նախատեսված դասի ընթացքում փոխվում են, հանդիսանալով տեսողական նյութ, չպետք է մոռանալ նաև այն, որ տարրական դպրոցում գերիշխում են պատկերավոր մտածողությունը: Ձայնա-տեսողական և ինտերակտիվ տեխնոլոգիաների դերը կրթության մեջ ամեն տարի մեծանում է: Դրանք հանդիսանում են ժամանակակից համակարգի անբաժան մասնիկները: Նոր սերունդը մեծացել է հեռուստացույցների, համակարգիչների և հեռախոսների ժամանակաշրջանում և ունեն ավելի մեծ տեսողական հիշողություն և ուսուցչից պահանջում են ուրիշ մոտեցումներ:

Մեփական տեղեկատվական տեխնոլոգիաները ժամանակակից աշխարհում դասվում են այնպիսի հատկությունների առաջին շարքում, ինչպիսինն են գրելն ու կարդալը:

Մարդը, ով կարողանում է արդյունավետ օգտագործել տեղեկատվական տեխնոլոգիաները, ունի նոր մտածելակերպ:

Օգտագործվող տեղեկատվական միջոցներն են համակարգիչը, ձայնագրությունը, ֆիլմը և տեսաֆիլմը: Մերօրյա կրթության համար տեսողական տեղեկատվությունն ավելի կարևոր է: Ներկայացումները անկախ այն բանից, թե ինչի համար են նախատեսված դասի ընթացքում փոխվում են, հանդիսանալով տեսողական նյութ, չպետք է մոռանալ նաև այն, որ տարրական դպրոցում գերիշխում են պատկերավոր մտածողությունը: Ձայնա-տեսողական և ինտերակտիվ տեխնոլոգիաների դերը կրթության մեջ ամեն տարի մեծանում է: Դրանք հանդիսանում են ժամանակակից համակարգի անբաժան մասնիկները: Նոր սերունդը մեծացել է հեռուստացույցների, համակարգիչների և հեռախոսների ժամանակաշրջանում և ունեն ավելի մեծ տեսողական հիշողություն և ուսուցչից պահանջում են ուրիշ մոտեցումներ:

Ինֆորմացիոն տեխնոլոգիաներն ունեն մեծ ազդեցություն կրթության բնագավառում.

1. ընդլայնվում են նոր տեղեկատվության փնտրման հնարավորությունները, ինչը նշանակում է ավելի մանրակրկիտ յուրացնել այս կամ այն նյութը,
2. լայն հնարավորություններ է տալիս մանկավարժին հետաքրքրել աշակերտին և սովորեցնել ինքնուրույն աշխատել ոչ ավանդական մեթոդով, փնտրել այս կամ այն խնդրի լուծումը,
3. հնարավորություն է տալիս տարաբնույթ աշխատել, արագ և ճիշտ ձևով դեկավարել աշակերտին, ինչը հնարավորություն է տալիս դասը կազմակերպել այնպես, որ ցանկացած աշակերտ դասը յուրացնի

Առանց տեղեկատվական տեխնոլոգիաների չենք կարող մեզ պատկերացնել ժամանակակից դպրոցում: Ի հայտ են գալիս ոչ սահմանափակ հնարավորություններ ուսումնական գործունեության համար զարգացնելով միտքը:

Համակարգիչը, պրոյեկտորը և ինտերակտիվ գրատախտակը կարելի է օգտագործել որպես անհատական կրթության միջոց, կրթական նյութի կազմակերպման միջոց, ակնթարթորեն գնահատել աշակերտի հաջողությունները և ստացած տեղեկատվությունը: Այստեղից էլ հետևում են տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման նպատակները.

- սովորելու մոտիվացիան /շարժառիթը/,
- մեծացնել ուսումնական գործընթացի արդյունավետությունը,
- նպաստել սովորողների ճանաչողական կարողությունների խթանմանը,
- բարելավել դասի անցկացման մեթոդները,
- ժամանակին համակարգել ուսուցման և դաստիարակության արդյունքները,
- պլանավորել և համակարգել սեփական աշխատանքը,
- օգտագործել այն որպես ինքնակրթության միջոց,
- արագ և որակյալ պատրաստվել դասին:

Տեղեկատվական դարաշրջանում կրթության բնույթի մեջ կատարվող արմատական փոփոխությունը սերտորեն առնչված է տեղեկատվության և հաղորդակցության արդի միջոցների զարգացման և տարածման հետ: Կրթությունը կրթության այն հիմնաքարն է, որի որակից է կախված երեխայի հետագա ուսուցումը: Տարրական դպրոցում անհնար է դասավանդել առանց հասանելի և մատչելի տեսանյութերի:

Առաջանում են մի շարք խնդիրներ. որտեղ գտնել և ինչպես ներկայացնել նյութը: Որը դպրոցի ուսուցչի համար հատուկ պատասխանատվություն է սահմանում: Նրա խնդիրն է ոչ միայն կարդալ ու գրել սովորեցնել, այլ նաև երեխայի հոգևոր հիմքը հաստատել, բացահայտել նրա լավագույն որակները, ուսումնական գործունեության ուղիները ցույց տալ: Դպրոցականների ուսումնական գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման նպատակահարմարությունը կայանում է նրանց տարիքային այնպիսի առանձնահատկությունները, ինչպիսիք են տեսողական պատկերավոր մտածողության զարգացումը՝ բանավոր և տրամաբանական մտածողության համեմատ, ինչպես նաև անալիզատորների անհավասար եւ ոչ բավարար զարգացումը, որոնց շնորհիվ են երեխաները ընկալում ինֆորմացիան՝ դրա հետագա մշակման համար: Եթե տեղեկատվությունը չի ընկալվել, ապա չի կարող հասկանալի, յուրացված լինել, չի կարող դառնալ անձի սեփականությունը, նրա մշակույթի տարրը:

Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը թույլ է տալիս ներգրավվել ուրիշ աշխարհ, տեսնել այն քո աչքերով: Ըստ հետազոտությունների մարդու

Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը թույլ է տալիս ներգրավվել ուրիշ

աշխարհ, տեսնել այն քո աչքերով: Ըստ հետազոտությունների մարդու հիշողության մեջ մնում է լսած նյութի ընդամենը ¼-ը, տեսածի՝ 1/3-ը, տեսածի և լսածի ½-ը, եթե աշակերտը ներգրավված է ակտիվ գործողությունների մեջ ուսուցման ընթացքում: Համակարգիչը պայմաններ է հարթում ուսուցման գործընթացի վերելքի համար, նաև կատարելագործում է ուսուցման բովանդակությունը, մեթոդները և կազմակերպչական ձևերը: Տարրական դպրոցի տեղեկատվայնացումը էական դերակատարում ունի կրթության արդի որակի և 21-րդ դարի երեխայի տեղեկատվական մշակույթի ձևավորման համար:

SZS օգտագործումը դպրոցում թույլ է տալիս. աշակերտների ճանաչողական գործունեությունը խորացնելու համար, դասեր վարել բարձր գեղագիտական մակարդակում (երաժշտություն, անիմացիա), անհատական մոտեցում աշակերտին՝ կիրառելով բազմաբնույթ խնդիրներ: Ժամանակակից երեխան ապրում է էլեկտրոնային մշակույթի աշխարհում:

Ուսուցչի դերը տեղեկատվական մշակույթի մեջ նույնպես փոխվում է՝ նա պետք է դառնա տեղեկատվական հոսքի համակարգող: Այսինքն, ուսուցիչը պետք է ունենա ժամանակակից տեխնիկա և նոր կրթական տեխնոլոգիաներ՝ երեխայի հետ նույն լեզվով հաղորդակցվելու համար և դառնալ ժամանակակից, տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաներ օգտագործելով ուսումնական գործընթացը կազմակերպելու համար:

Տարրական կրթության տեղեկատվայնացումն ընթանում է հետևյալ ուղղություններով.

Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը որպես ուսուցման դիդակտիկ միջոցներ,

- Դասի կազմակերպում տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ,
- դպրոցականների նախագծային աշխատանքների իրականացում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ:

Ուսումնական գործընթացի կազմակերպումը կրտսեր դպրոցում առաջին հերթին պետք է խթան հանդիսանա սովորողների ճանաչողական կարողությունների ակտիվացման, ուսումնական նյութի հաջող յուրացման համար և նպաստի սովորողի հոգևոր զարգացմանը: Հետևաբար, տեղեկատվական տեխնոլոգիաները պետք է

կատարեն որոշակի կրթական գործառույթ, օգնեն երեխային կողմնորոշվել տեղեկատվության հեղեղի մեջ, ընկալել այն, հիշել, և ոչ մի դեպքում չվնասել առողջությունը: Տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցները պետք է գործեն որպես ուսումնական գործընթացի օժանդակ տարր, այլ ոչ հիմնական: Նկատի ունենալով տարրական դպրոցի աշակերտների հոգեբանական առանձնահատկությունները, տեղեկատվական տեխնոլոգիաների հետ աշխատանքը պետք է հստակ մտածված և չափավորված լինի: Ուստի, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը դասին պետք է կրի նուրբ բնույթ:

Ուսուցիչը, դասին նախապատրաստվելիս պետք է հանգամանորեն մտածի տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման նպատակի, տեղի և ձևի մասին: Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ ուղեկցվող դասերը իրենց հստակության, գեղեցկության և տեսանելիության շնորհիվ ուսումնական նյութի ընկալման ընթացքում առավել մեծ տպավորություն են թողնում սովորողների հոգեբանա-հուզական ֆոնի վրա:

Մուլտիմեդիան նյութի և գործընթացների ներկայացումն է ոչ թե ավանդական տեքստային նկարագրությամբ, այլ ֆոտոնկարների, տեսանյութերի, գծագրերի, շարժանկարների, ձայնի օժանդակությամբ: Դասի անցկացումը մեդիայի շնորհիվ գրավում է կրտսեր դպրոցականներին: Այդպսի դասերի ընթացքում դասարանում ստեղծվում է իրական շփման իրավիճակ, որի ժամանակ երեխաները ձգտում են իրենց մտքերն արտահայտել սեփական բառերով, հաճույքով են կատարում առաջադրանքները, ուսումնական նյութի հանդեպ մեծ հետաքրքրություն են ցուցաբերում: Ակնհայտ է երկու հիմնական առավելություն՝ որակական և քանակական: Որակական առումով նոր հնարավորություններն ակնհայտ են, եթե ուղղակի համեմատենք բանավոր նկարագրությունները տեսաձայնային ներկայացման հետ: Քանակական առավելությունները արտահայտվում են նրանով, որ մեդիամիջավայրն անհամեմատելի մեծ է տեղեկության խտությամբ: Իսկապես, տեքստի 1 էջը դասավանդողն արտաբերում է 1-2 բառերի ընթացքում: Այդ նույն բառերի ընթացքում լայնեկրան տեսանյութը բերում է տեղեկատվության ավելի մեծ ծավալ: Հաստատված է, որ նյութի բանավոր մատուցման ժամանակ սովորողը բառերում ընկալում է և ընդունակ

է վերլուծելու մինչև հազար պայմանական միավոր տեղեկություն, իսկ տեսողական օրգանների «միացման» դեպքում՝ մինչև 100 հազար այդպիսի միավոր:

Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը դասի տարբեր փուլերում.

- սովորողների նախապատրաստում նոր նյութի յուրացմանը,
- նոր նյութի յուրացում,
- նոր նյութի ամրապնդում,
- դասի ամփոփում,
- տնային առաջադրանք:

Այս տեխնոլոգիան կարելի է դիտել որպես ուսուցման բացատրական-զննական մեթոդ, որի հիմնական նպատակը ուսումնական նյութի հաղորդման ճանապարհով սովորողների՝ տեղեկատվության յուրացման կազմակերպումն է և դրա հաջող ընկալման ապահովումը, որը ընդլայնվում է, երբ զուգահեռ միանում էնաս տեսողական հիշողությունը: Տարրական դպրոցում մեդիատեխնոլոգիաների կիրառումը սկզբունքորեն չի փոխում դասի կառուցվածքը: Նրա մեջ պահպանվում են բոլոր փուլերը, փոխվում են միայն դրանց ժամանակավոր բնութագրերը:

Մեդիա ներկայացման կառուցվածքային դասավորությունը զարգացնում է համակարգված, վերլուծական մտացողությունը:

Կարելի է տարբերակել մեդիա ներկայացմամբ անցկացվող դասի հետևյալ առանձնահատկությունները՝

- կավիճով գրված պատկերի որակը չի կարող համեմատվել էկրանի վրայի կոկիկ, պայծառ, հստակ և գունավոր պատկերի հետ,
- շնորհանդեսի ներկայացման ժամանակ սովորողի աշխատանքային տարածքը լավ լուսավորված է,
- տեղեկատվական տեխնոլոգիաներ օգտագործող դասավանդողը ստիպված է մեծ ուշադրություն դարձնել ուսումնական նյութի մատուցման տրամաբանությանը, որը դրական է անդրադառնում սովորողների գիտելիքների մակարդակի վրա:

Ավելի էական է, որ աշակերտները սկսում են համակարգչին վերաբերվել արդեն ոչ խաղի միջոց, այլ գործիք ցանկացած բնագավառի աշխատանքի համար:

Այսպիսով, մեդիատեխնոլոգիաները հարստացնում են ուսուցման գործընթացը, թույլ

են տալիս ուսուցումը դարձնել ավելի արդյունավետ, նաև նպաստում են սովորողի ստեղծագործական զարգացմանը:

Գոյություն ունեն տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ աշխատանքների բազմազան ձևեր կրտսեր դպրոցում անցկացնելու համար: Համակարգիչը դասի բոլոր փուլերում և բոլոր առարկաների ժամանակ առկա է, իհարկե հաշվի առնելով յուրաքանչյուր տարիքի սանիտարա-հիգիենիկ նորմերը:

Փորձի փոխանակման նպատակով կոլեգաների հետ միասին անցկացնում ենք բաց դասեր, արտադասարանային միջոցառումներ տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ:

Այսպիսով, մեղիաներկայացումը հնարավորություն է տալիս ուսուցչին`

- պատկերավոր ներկայացնել դասը,
- ամրապնդել նոր նյութի հաղորդման ընթացքը,
- կարգավորել ներկայացվող տեղեկատվության ծավալն ու արագությունը անհմացիայի շնորհիվ,
- մեծացնել սովորողների ճանաչողական ակտիվությունը: Իսկ սովորողներին հնարավորություն է տալիս`
- պատկերավոր ներկայացնել ուսումնական նյութը,
- դարձնել դասն առավել հետաքրքիր,
- նոր նյութի հաղորդման պրոցեսը դարձնել առավել ինտենսիվ:

Մենք բոլորս հասկանում ենք, որ S2S-ի պատշաճ օգտագործումը դպրոցում **նպաստում է.**

- Աշակերտների գիտելիքների որակի բարելավում, դիդակտիկ դժվարությունների նվազեցում;
- Վերապատրաստման դասակարգումը ապահովելու համար;
- Բարձրացնում է դասում կատարված աշխատանքների քանակը.
- Ուսանողների շրջանում ինքնակազմակերպման և ինքնակառավարման հմտությունների զարգացում;
- Ուսումնական գործընթացի կազմակերպման ռացիոնալացում,
- Դասի արդյունավետության բարձրացում;
- Բարձրացնել ուսուցման հարմարավետության մակարդակը, դասի ընթացքում

դպրոցականների ակտիվությունն ու նախաձեռնությունը մեծացնելը;

- Տեղեկատվության և հաղորդակցման իրավասությունների ձևավորում:

Այսպիսով՝ տեղեկատվական տեխնոլոգիաների օգնությամբ գործնականում լուծվում է անհատական ուսուցման խնդիրը: Գույնի, գրաֆիկայի, մուլտիպլիկացիայի, ձայնի ժամանակակից բոլոր միջոցների կիրառումը տեսագրման տեխնիկային հնարավորություն է ընձեռում վերստեղծել իրական գործունեության պատկերը: Համակարգիչն օգնում է ուժեղացնել ուսման շարժառիթը: Աշակերտներն աշխատում են անհատական, փորձերի և սխալների օգնությամբ հասնում են ճիշտ պատասխանին: Արդյունքում դասարանում չկա այնպիսի երեխա, որը չկարողանա հաղթահարել առաջադրանքը և պասիվ նստել ու սպասել, թե վերջապես ուսուցիչն իր ուշադրությունը, երբ է դարձնելու իր վրա: Այսպիսով, տեղեկատվության ընկալման և յուրացման ընթացքի հեշտացումը վառ պատկերների օգնությամբ ցանկացած ժամանակակից շնորհանդեսի հիմքն է: Դրա համար ուսուցիչը պետք է փնտրի համեմատաբար արդյունավետ միջոցներ դասապրոցեսի համար:

Աշակերտներին հրապուրում է իրենց մասնակցությամբ դասի անցկացումը: Դասարանում այդպիսի դասերի ընթացքում ստեղծվում է անմիջական շփման միջավայր, որում աշակերտները ձգտում են արտահայտել մտքերն իրենց բառերով, նրանք սիրով լուծում են խնդիրները, ցուցաբերում են հետաքրքրություն ուսումնասիրվող թեմայի նկատմամբ, աշակերտները համակարգչից չեն վախենում: Աշակերտները սովորում են ինքնուրույն աշխատել: Աշակերտների մոտ առաջ է գալիս հետաքրքրություն ավելի բարձր արդյունքներ ստանալու պատրաստակամություն և ցանկություն լրացուցիչ առաջադրանք կատարելու:

ԳԼՈՒԽ 2. ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԽԱՂԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՏԱՐԲԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԴԱՄԻՆ

2.1. Դասի տարբեր փուլերում օգտագործվող խաղային տեխնոլոգիաներով առաջադրանքներ

1. Այս խաղ-վարժությունը առաջին դասարանի աշակերտների համար.

Նպատակն է երեխաների մոտ ամրապնդել կարգային միավորները:

Այս վարժությունը կարող ենք կիրառել ինչպես դասի բանավոր հաշիվ փուլում, այնպես էլ դասի վերջում՝ դասի ամրապնդման փուլում, թեման աշակերտների մոտ ամրապնդելու նպատակով:

Աշակերտը պետք է համապատասխանեցնի թվերը և դրանց կարգային միավորները՝ տեղադրելով

համապատասխան վանդակում:

The diagram shows a grid of boxes for placing cards. The top row has five boxes, and the bottom row has five boxes. Above the top row are five colored cards: blue (100), red (6), orange (30), green (50), and purple (10). Below the bottom row are five colored cards: blue (14), green (12), orange (10), purple (13), and red (15). The numbers 14, 6, 30, 50, 100 are placed in the top row boxes, and 11, 12, 10, 13, 15 are placed in the bottom row boxes.

2. Նպատակն է աշակերտների մոտ ամրապնդել թվերի միմյանցից մեծ,փոքր և հավասար լինելը, ինչպես նաև ամրապնդել երկարության չափման միավորները:

Այս խաղ-վիկտորինան կարող ենք կիրառել դասի ցանկացած փուլում: Բանավոր հաշվի փուլում երեխաները կատարելով

այս վարժությունը կմարզեն իրենց ուղեղը և կկրկնեն

արդեն անցած թեման: Վիկտորինան կիրառելով

դասի ընթացքում, որեպս վարժություն, կստուգենք՝

երեխաները որքանով են հասկացել

The diagram shows two sets of cards. The first set has two cards: '1 դմ 9սմ -ը 16 սմ-ից' (1 dm 9 cm is less than 16 cm) and '1 դմ 4սմ -ը 12սմ-ից' (1 dm 4 cm is less than 12 cm). The second set has two cards: '1 դմ 5սմ-ը 19սմ-ից' (1 dm 5 cm is less than 19 cm) and '1 դմ 4սմ -ը 12սմ-ից' (1 dm 4 cm is less than 12 cm). Below these are two sets of length measurement cards: '1 դմ 6սմ-ը 16 սմ-ից' (1 dm 6 cm is less than 16 cm) and '1 դմ 7սմ-ը 1 դմ 7սմ-ից' (1 dm 7 cm is equal to 1 dm 7 cm). Each card has colored boxes for 'A', 'B', and 'C' with mathematical symbols like >, <, =.

Նկար 4

բացթողումներ են եղել, վարժությունը կիրառելով դասի ամփոփման փուլում, կամրապնդենք դասի ընթացքում ձեռք բերած գիտելիքը և կկրկնենք արդեն իմացածը: Աշակերտը պետք է կատարի համեմատություն ճիշտ պատասխանելով հարցերին: Վարժությունը ստեղծված է վիկտորինայի տեսքով: Աշակերտները պետք է վերևում գրված երկարության չափման միավորները դարձնեն

նույնը նոր կատարեն համեմատություն: Թվերի ներքևում տրված են տարբերակները, որոնցից

աշակերտները պետք է ընտրեն այն, որը ճիշտ է:

3. Զգույշ, մեղուներ են

Աշակերտը, այս մաթեմատիկական գլուխկոտրուկ լաբիրինթոսը լուծելու համար պետք է օգնի արջուկին գտնել դեպի մեղր տանող ամենակարճ ճանապարհն այնպես, որ նա չտրորի մեղուներին և չանցնի նրանց վանդակներին կից վեցանկյունների միջով:



2.2. Ուսուցանող խաղերի կիրառական հարթակներ և կայքեր /Google Classroom, Moodle, Smart Notebook, Kahoot!, Whiteboard V 5.1, Dasaran.am, Microsoft Power Point, , Innostud.am և այլ/



Նկար 8

Այսօր բոլորիս հայտնի է, որ մենք ապրում ենք ինֆորմացիոն տեխնոլոգիաների դարաշրջանում, որոնց կիրառումը արմատապես փոխել է մեր կյանքը՝ բոլոր ասպարեզներում, այդ թվում նաև կրթական միջավայրում: Տեխնիկական զանազան միջոցների կիրառումը՝ էլեկտրոնային գրատախտակ, տեսաերիզներ, ձայնագրի և այլն, որը հնարավորություն են տալիս բարձրացնելու դասընթացի արդյունավետությունը:

Փորձենք ներկայացնել մի քանի ծրագրերի արդյունավետությունը նորարարական դաս-ներկայացումներում:

Smart Notebook ծրագիրն ունի բազում հնարավորություններ, գրեթե բոլոր անհրաժեշտ նկարներն ու նշանները, որոնք կարող են օգտագործվել ցանկացած հետաքրքիր, ինչպես նաև գեղեցիկ դիզայինով ընդգծված դաս պատրաստելու համար: Այն անշուշտ ավելի մեծ հետաքրքրություն կառաջացնի ուսումնասիրվող նյութի նկատմամբ, որն էլ կնպաստի՝ ուսանողների կողմից ավելի ակտիվ դասին մասնակցելուն, ազատ արտահայտվելուն, քննարկումներ, բանավեճեր անցկացնելուն:

Smart Notebook ծրագրով ինտերակտիվ դասերի պատրաստման միջոցով դասընթացը դառնում է առավել ակտիվ, հետաքրքիր, անմիջական կապ է ստեղծում դասավանդողի և սովորողի միջև:

Մաթեմատիկայի նորարարական դաս-ներկայացումները առավել գեղեցիկ դարձնելու և ցուցադրելու նպատակով կարող ենք օգտագործել Microsoft PowerPoint, որը Microsoft Office փաթեթի բաղադրիչներից է: Ցուցադրման մեջ կարելի է մտցնել ինչպես ձայնային, այնպես էլ տեսաէֆեկտներ: Համակարգչային ցուցադրումը կարող է բաղկացած լինել միայն մեկ սլայդից, սակայն սովորաբար այն բազմաթիվ սլայդներ է պարունակում: Ցուցադրումը սկսվում է «տիտղոսային սլայդով», որը հիմնականում պարունակում է տվյալ ցուցադրման վերնագիրն ու ընդհանուր բնույթի այլ հարցեր:

Dasaran.am ծրագրի նպատակն է ստեղծել «աշակերտ-ծնող-ուսուցիչ» կապն ապահովող համապարփակ միջավայր: Ծրագիրը ծնողներին հնարավորություն է տալիս ամենօրյա ուշադրության կենտրոնում պահել երեխայի ուսման և դաստիարակության հետ կապված խնդիրները, մասնավորապես ծանոթանալ երեխայի առաջադիմությանը, միջին գնահատականներին, տնային առաջադրանքներին ու վարքագծին: Յուրաքանչյուր ծնող և աշակերտ ունեն միայն անհատական մուտք դեպի համակարգ: Համակարգը աշակերտներին հնարավորություն է տալիս ստեղծել հասակակակիցների և ընկերների լայն ցանց, զանազան ինտելեկտուալ խաղերի միջոցով խորացնել գիտելիքները, զարգացնել տարբեր կարողություններ ու հմտություններ՝ մասնակցելով հատուկ մշակված մրցույթների

Moodle համակարգի նպատակը դասախոսների և ուսանողների համատեղ առցանց աշխատանքն է: Այն ուսանողներին հնարավորություն է ընձեռում գտնելու իրենց անհրաժեշտ նյութերը, մասնակցելու ֆորումների և տեսագիտաժողովների, քննությունների, ներկայացնելու կատարված հանձնարարությունները և այլն:

Wordwall և LearningApps ծրագրերը լայն տարածում ունեցող ծրագրեր են, որոնց միջոցով հնարավորություն ունենք կառուցել խաղ-վարժություններ, որոնք կարող ենք օգտագործել դասի ցանկացած փուլում:

Wordwall-ն ինչպես ինտերակտիվ, այնպես էլ տպագիր նյութեր ստեղծելու բազմաֆունկցիոնալ գործիք է: Կադապարների մեծ մասը մատչելի են ինչպես ինտերակտիվ, այնպես էլ տպագիր տարբերակներում: Շատ ուսուցիչներ գոհ են այն փաստից, որ ծառայությունն ունի ռուսալեզու տարբերակ: Այն ինքնաբերաբար կհայտնվի ձեր բռնագրում: Ինտերակտիվ վարժությունները հասանելի են ցանկացած սարքավորման համար, որոնք կարող են միանալ համացանցին, օրինակ՝ համակարգիչ, պլանշետ, հեռախոս կամ սմարթ գրատախտակ: Տպագիր տարբերակները կարող են տպվել և օգտագործվել որպես ինքնուրույն ուսումնական առաջադրանքներ: Աշխատանքային ալգորիթմը մոտավորապես նույնն է, ինչ ուսուցիչների շրջանում տարածված LearningApps-ում:

Kahoot! (Կահուրթ), խաղի վրա հիմնված ուսումնական պլատֆորմ:

Օգտագործվում է որպես ուսումնական տեխնոլոգիա դպրոցներում և այլ ուսումնական հաստատություններում: Ընկերությունը հիմնադրվել է 2013 թվականի օգոստոսին՝ Նորվեգիայում: Ընկերությունը ներկայացրեց ուսուցողական խաղեր, որոնք բազմակի ընտրության վիկտորինաներ են և հասանելի են վեբ բրաուզերով: Kahoot-ը կարելի է օգտագործել աշակերտի գիտելիքների վերանայման և ձևավորող գնահատման համար կամ որպես առույգացնող վարժանք: Խաղը նախատեսված է հասարակական ուսուցման համար: Սովորողները հավաքվում են

ընդհանուր էկրանի շուրջ, որը կարող է լինել ինտերակտիվ գրատախտակ, պրոյեկտոր կամ համակարգչի մոնիտոր: Կայքը կարող է

օգտագործվել նաև Skype-ի և GoogleHandouts-ի միջոցով: Kahoot կարելի է խաղալ տարբեր բջջային հեռախոսներով՝ դրանց վեբ հնտերֆեյսի միջոցով: Խաղը բավականին պարզ է՝ խաղացողները միանում են օգտագործելով խաղի կոդից առաջարկված PIN կոդը, որը ցույց է տրված ընդհանուր էկրանի վրա, և օգտագործում են սարք, որպեսզի պատասխանեն ուսուցչի բիզնեսի կառավարչի կամ մեկ այլ անձի ստեղծած հարցերին: Այս հարցերը հետո կարող են փոխվել մրցանակային միավորների: Յուրաքանչյուր հարցից հետո միավորները հայտնվում են առաջատարների տախտակում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս բոլոր մեթոդները և մեթոդական հնարները օժանդակում են դասավանդողների գործունեությանը, դարձնում են բազմաբովանդակ, համապատասխան սովորողի հետաքրքրություններին, որոնք նպաստում են փոխկապակցված, ստեղծագործական կարողությունների ձևավորմանը: Սովորողների համար օգտակար և արդյունավետ է սովորել այնպիսի մեթոդական հնարներով, որոնք զարգացնում են քննադատական, ստեղծագործական մտածողության հմտությունները, ինքնուրույն մտածելու կարողությունը: Նորագույն տեխնոլոգիաների միջոցով հնարավոր է վերացնել այն խոչընդոտները, որոնց հանդիպում են աշակերտներն և ուսուցիչներն ամբողջ աշխարհում: Դասավանդմանն ուսուցման նորարարական եղանակները վերափոխում են նաև դասարանում դաս անցկացնելու գործելակերպը: Տեխնոլոգիաներն աշակերտներին նոր պահանջներ են ներկայացնում հիմնական կարողություններից բացի՝ համագործակցության, հաղորդակցման և տեղեկատվական կառավարման կարողությունների տիրապետմանը: Նաև նրանց պետք է հասանելի լինեն ուսմանն օժանդակող այն բոլոր միջոցները, որոնք հնարավոր են դարձնում այդ կարողությունների օգտագործումը:

Ժամանակակից կրթական հայեցակարգերում շեշտադրվում է ՏՀՏ-ի զարգացման հիմնարար նշանակությունը նաև հանրակրթական դպրոցների տարրական դասարանների սովորողների համար: Ձևավորված մոտեցումներից մեկը, թերևս ամենակիրառականը, ՏՀՏ-ի հետ զուգորդված ուսուցումն է: Այդ մոտեցման հետ կապված բովանդակային և մեթոդական հիմնահարցերի վերաբերյալ մեր կողմից կատարված հետազոտությունները բավարար հիմք են տալիս հետևյալ հաստատելու համար:

Հանրակրթական դպրոցների տարբեր առարկայախմբի դասընթացներում տեղեկատվական տեխնոլոգիաների ներառումը՝ ա) հնարավորություն է տալիս արմատապես բարելավելու սովորողների լեզվատրամաբանական մտածողության զարգացման խնդրի լուծումը, բ) հիմք է ծառայում դասընթացի տեխնիկավարժանքային ուղղվածությունը գաղափարական-բովանդակային դաշտ

տեղափոխելու, սերտողական ուսուցման թերությունները նվազեցնելու և ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու համար

Այսպիսով, ուսուցման գործընթացում ՏՀՏ-ի տարրերի ներառման և ժամանակակից մեթոդների արդյունավետ կիրառման շնորհիվ ուսումնական բնագավառների համակարգում զգալիորեն մեծանում է հանրակրթական ներուժը:

ՕԳՏԱՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աստվածատրյան Մ., Թերզյան Գ., Թորոսյան Ա., Շարխաթունյան Հ., Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը հանրակրթական դպրոցում, <<Աստղիկ>>, Ե., 2004թ.:
2. Գյուլամիրյան Ջ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Ե., Զանգակ, 2015թ.:
3. <<Դպիր>> էլեկտրոնային ամսագիր 12 (76):
4. Թորոսյան Կ. և ուրիշներ, Ինչպես պլանավորել մայրենիի դասը 4, <<Զանգակ>> հրատ., Երևան 2017թ.:
5. Թոփուզյան Ա. Օ., Գյուլամիրյան Ջ.Հ., Պողոսյան Լ.Մ., Ասատրյան Ս.Մ., Անտոնյան Լ.Ա., Ղազարյան Մ.Զ., Տեղեկատվական տեխնոլոգիաները տարրական դպրոցում, Ե., 2018թ.:
6. Հակոբյան Մ. Զ., Պողոսյան Ս. Գ., ՏՀՏ-ի կիրառումը կրթական համակարգում: Ե., 2015թ.:
7. Հանրակրթության պետական կրթակարգ, Ե., Անտարես, 2004թ.:
8. ՀՀ <<Կրթական չափորոշիչներ>>, Անտարես, Ե., 2011թ.:
9. ՀՀ Տարրական դասարանների մայրենիի առարկայական ծրագիր, Անտարես, Ե., 2011թ.:
10. <<Նախաշավիղ>>, 4. 2011թ.:

